ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունվարի 2023 թվականի N 55 - Ա

ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի հուլիսի 4-ի վճռով (գործ ԵԴ/32273/02/21) տիրազուրկ ճանաչված և Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող 24 հատ («Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության «Երևան» կայարանում՝ 11 հատ (գործարանային համարներ՝ 318180694, 319476308, 319325373, 310821266, 315524420, 312895508, 340351989, 310986018, 315564222, 312472526, 1 հատը՝ առանց համարի), «Իջևան» կայարանում՝ 11 հատ (գործարանային համարներ՝ 314070200, 318446611, 316202080, 315757858, 314722543, 316401466, 314866108, 340282552, 317711662, 313943687, 319110229) և «Վանաձոր» կայարանում՝ 2 հատ (գործարանային համարներ՝ 313710997, 314597173) երեք տոննայանոց բեռնարկղերը (այսուհետ՝ գույք) ամրացնել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարիքների համար օգտագործելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին՝

1) ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի գնահատման աշխատանքների իրականացումը՝ գնահատման հետ կապված ծախսերն իրականացնելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության միջոցների հաշվին.

2) սույն կետով նախատեսված գնահատման արդյունքներով ապահովել գույքը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հաշվեկշռում հաշվառելը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

12.01.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ